Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-572[1]-17.04.2020-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

# «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-196-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածում.

1. 1-ին մասի՝

1) 8-րդ կետում «վերահսկողություն» բառից առաջ լրացնել «իր լիազորությունների սահմաններում» բառերը,

2) 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

3) 10-րդ կետից հանել «արտադրությունն ու» բառերը:

2. 2-րդ մասի 6-րդ կետի «դ» ենթակետից «ռազմարդյունաբերական համալիրի,» բառերը հանել, «ծրագրերը» բառը փոխարինել «ծրագիրը» բառով:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածում.

1. 2-րդ մասի 6-րդ կետի «ա» ենթակետից «ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագրի» բառերը հանել,

2. 3-րդ մասում լրացնել 8.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.1) կազմակերպում և ղեկավարում է զինված ուժերում գյուտարարական և նորարարական աշխատանքները.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Երկրորդ ընթերցում*

*Կ-572[1]-17.04.2020-ՊԱ-011/1*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

# «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***ՀՈԴՎԱԾ 1.*** «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-196-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածում.

~~1)~~ 1.1-ին մասի՝

~~ա.~~ 1)8-րդ կետում «վերահսկողություն» բառից առաջ լրացնել «իր լիազորությունների սահմաններում» բառերը,

~~բ.~~2) 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

~~գ~~3). 10-րդ կետից հանել «արտադրությունն ու» բառերը:

~~2)~~ 2.2-րդ մասի 6-րդ կետի «դ» ~~ենթակետում~~ ենթակետից «ռազմարդյունաբերական համալիրի,» բառերը հանել, ~~«, ինչ~~ «ծրագրերը» ~~բառերը~~ բառը փոխարինել «ծրագիրը» բառով:

***ՀՈԴՎԱԾ 2.*** Օրենքի 17-րդ հոդվածում.

~~1)~~1. 2-րդ մասի 6-րդ կետի «ա» ~~ենթակետի~~ ենթակետից «ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագրի» բառերը հանել,

~~2)~~2. 3-րդ մասում լրացնել 8.1-ին կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«8.1) կազմակերպում եւ ղեկավարում է զինված ուժերում գյուտարարական եւ նորարարական աշխատանքները.»:

***ՀՈԴՎԱԾ 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-572-17.04.2020-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | **«Ռազմարդյունաբերական համալիրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրենքի նախագծի 5-րդ հոդված | Նախագծի 5-րդ հոդվածում «մասում» բառը փոխարինել «մասից» բառով: | Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է |
| | | **«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրենքի նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «ենթակետում» բառը փոխարինել «ենթակետից» բառով, «ծրագրերը» բառից առաջ նախատեսված «,իսկ» բառը հանել, իսկ «բառերը» բառը փոխարինել «բառը» բառով: | Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»** օրենքի նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «ենթակետի» բառը փոխարինել «ենթակետից» բառով: | Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է |
| | | **«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ** | Նախագծի համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին: | Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է |